ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«ՀՈՒՅՍԻ ՃԱՌԱԳԱՅԹ»
աստվածաշնչյան դասընթաց

Դաս 7

ԱՍՏՈՇ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր մարդ վաղ թե ուշ երես առ երես պետք է հանդիպի սարսափելի թշնամու՝ մահվան հետ: Դրա համար միանգամայն բնական է, որ մարդիկ հետաքրքրվում են այն հարցով, թե ինչ կլինի իրենց հետ մահից հետո, և որտեղ իրենք կանցկացնեն հավիտենությունը: Մեծ մասամբ մարդիկ շատ աղոտ պատկերացում ունեն երկնային թագավորության մասին: Ի՞նչ է իրենից ներկայացնում այդ թագավորությունը: Որտե՞ղ է այն: Ովքե՞ր են այնտեղ բնակվում: Եվ ինչպե՞ս մտնել Աստծո թագավորությունը:

Մեր Տերը և Փրկիչը սովորեցրեց աշակերտներին աղոթել. «Գա Քո արքայությունը»: Դա նշանակում է, որ Աստծո թագավորությունը դեռ չի եկել, և մենք մշտապես պետք է աղոթենք, որպեսզի այն գա: Համենայն դեպս, հարց է առաջանում՝ դա իրակա՞ն տեղ է, թե՞ միայն երևակայական: Երկնային թագավորության բնակիչները իրական էակնե՞ր են, թե՞ անմարմին հոգիներ:

Ամենից առաջ պետք է հասկանանք, որ ոչ մի գիտություն մեզ չի կարող տեղեկություն տալ Աստծո թագավորության մասին: Միայն Աստծո Խոսքը կարող է հուսալի բացատրություն տալ, և մենք լիովին կարող ենք վստահել նրա տված տեղեկություններին՝ գրված այն մարդկանց կողմից, ովքեր «Սուրբ Հոգուց շարժված» էին (Բ Պետրոս 1.21): Սուրբ գիրքը ոչ միայն տեղեկություններ է տալիս ապագա աշխարհի մասին, այլ նաև ցուցումներ, թե ինչպես ապրենք այս կյանքում, որպեսզի մտնենք երկնային թագավորությունը:

Հոգնած ճանապարհորդը հայրենիքն է կարոտում, գերին թախիծով է հիշում ազատության և իր հարազատ երկրի մասին, հայրական տնից բաժանված որդին ցանկանում է տուն վերադառնալ: Բայց ոչ միայն առանձին մարդիկ, այլև ամբողջ մարդկությունը ընդհանուր առմամբ ձգտում է ինչ-որ ավելի լավ բանի: Դժվար է գտնել մի մարդու, ով լիովին գոհ լինի իր վիճակից: Այդ մշտական անբավարարվածությունը և մարդու հոգու խոր կարոտը ինչ-որ ավելի լավի նկատմամբ ցույց է տալիս, որ մարդկությունը ինչ-որ բան է կորցրել և գտնվում է մշտական փնտրտուքի մեջ:

Աստծո զավակները, որ Նրա Խոսքն ուսումնասիրում են, գիտեն, թե ինչի են ձգտում և ինչ են փնտրում: Նրանք գիտեն, որ «Այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատվելու այն գալու փառքի հետ, որ մեզանում պիտի հայտնվի: Որովհետև ստեղծվածների եռանդալից ակնկալությունը Աստծո որդիների հայտնությանն է սպասում... այն հույսով, որ ստեղծվածներն իրենք էլ ապականության ծառայությունից կազատվեն՝ Աստծո որդիների փառավոր ազատության մեջ մտնելով: Որովհետև գիտենք, որ բոլոր ստեղծվածները մինչև հիմա միասին հառաչում են և ցավի մեջ են: Եվ ոչ միայն նրանք, այլ ինքներս էլ, որ հոգու առաջին պտուղն ունենք, մենք էլ մեր անձերում հառաչում ենք՝ որդեգրությանն սպասելով.

այսինքն՝ մեր մարմնի ազատությանը» (Հռոմեացիս 8.18-23):

Աստվածաշնչի առաջին էջում կարդում ենք, թե ինչպես երկրի վրա մարդու ապրելու համար իդեալական տեղ ստեղծվեց: Ստեղծագործության վեցերորդ օրվա վերջում Ինքն՝ Արարիչը, հայտարարեց, որ ամեն ինչ «շատ լավ էր»: Բուսական և կենդանական աշխարհը Արարչի ձեռքով կատարյալ ստեղծվեցին: Մարդն ստեղծվեց Աստծո պատկերով և դրվեց այդ գեղեցիկ և կատարյալ շրջապատում: Նա կատարյալ էր ու անմեղ, և ստեղծված էր հավիտյան ապրելու համար: Երկիրը և ամեն ինչ նրա վրա նրա տրամադրության տակ դրվեց: Բոլոր ստեղծվածները լիովին ներդաշնակության մեջ էին Աստծո կամքի հետ, և երկնային բոլոր բնակիչները ցնծում էին ուրախությունից:

Բայց այդ երջանիկ դրությունը խախտվեց մեղքով: Մարդը լսեց փորձչին և Աստծո պատվիրանը խախտեց: Նա այլևս չէր կարող Եդեմի այգում մնալ: Նա կորցրեց հավիտենական կյանքի իրավունքը, որն ուներ միայն հնազանդության պայմանով: Աստված չցանկացավ երկրի վրա անմահ մեղավորներ ունենալ և այդ պատճառով մարդուն կյանքի ծառից օգտվելու հնարավորությունից զրկեց: Տե՛ս Ծննդոց 3.22-24: Իշխանությունը երկրի վրա խլվեց նրանից և անցավ թշնամու ձեռքը, որն այժմ դարձավ «այս աշխարհի իշխանը»:

Նոր տիրոջ օրոք դրությունն անմիջապես փոխվեց. ոչ մի հավերժական բան չմնաց: Ուր էլ որ մենք նայենք, ամենուր կտեսնենք մեղքի հետևանքները: Հիվանդությունները, տանջանքները, ամենատարբեր արատները, այլանդակությունները և վերջապես մահը՝ այդ բոլորը համարվում են մեղքի անեծքը, Աստծո կամքին չհնազանդվելու հետևանքը:

Այդ ժամանակից են սկսվում մարդու թափառումներն ու տանջանքները: Նա կորցրեց հոգու խաղաղությունը, բնավորության մաքրությունը, կամքի ուժը, հավիտենական կյանքը, իր գեղեցիկ հայրենիքը, բոլորը, բացի իր Արարչի սիրուց: Մարդուն հայտնելով, թե ինչպիսի անեծք է հասել երկրին, Աստված միաժամանակ հայտնեց, որ աշխարհ կգա Փրկիչը՝ Աստծո Որդին, որպեսզի օգնի մարդկությանը նրա անհույս վիճակի մեջ: Նա Ադամի տեղը կգրավի և կանի այն, ինչը մարդն իր մեղավոր վիճակում չի կարող անել: Նա կվերադարձնի կորցրած տիրապետությունը և հավիտենական կյանքը:

Որպեսզի մարդուն վերադարձվեր նրա փառավոր տիրապետությունը, որ կորսված էր անհնազանդությամբ, Աստծո Որդին պետք է թողներ երկնային պալատները և երկնքի ամբողջ փառքը, գար երկիր ինչպես մարդ և Աստծո կամքին միանգամայն հնազանդ ապրեր: Որպեսզի վերադարձներ կորուսյալ հավիտենական կյանքը, Նա Ինքը պետք է մեռներ խաչի վրա մարդկային կորած սերնդի համար: Դրանում է Աստծո սիրո մեծ գաղտնիքը: «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդին տվեց, որ ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես 3.16): Նա այնպես սիրեց աշխարհը, որը դադարել էր սիրել նրան, որ ուղարկեց Քրիս-

տոսին, «որպեսզի ապրեցնի կորածը»:

Մարդը կորցրեց սեփական ուժերով Աստծուն հաճելի կյանքով ապրելու ընդունակությունը: Նա չի կարող ազատվել մեղքի կապանքներից, որոնցով թշնամին կապել է նրան: Նա խախտում է Աստծո օրենքը, և օրենքի խախտումը տանում է մահվան: Քրիստոսը կատարեց մարդու կողմից խախտված օրենքի բոլոր պահանջները, և Նրան ընդունողներին ուժ է տալիս՝ վերադառնալու երկնային Հոր մոտ: Փրկության մասին բարի լուրը, որն Աստված մարդուն հասանելի դարձրեց, կոչվում է Հիսուս Քրիստոսի Ավետարան: Այն քարոզվում է ամբողջ աշխարհում՝ մարդկանց կոչ անելով Աստծուն դառնալ, մեղքերի ներում ստանալ Փրկչի արյանը հավատալու միջոցով, ստանալ նրանից ուժ՝ Աստծուն հաճելի կյանքով ապրելու, Նրա կամքին հնազանդվելու համար, և, վերջապես, երբեմնի կորցրած հավիտենական կյանքը ստանալ: Այդ ամենը մարդը կարող է ձեռք բերել աշխարհի Փրկչին և Նրա փրկարար արյանը հավատալու միջոցով:

Ավետարանն իր մեջ ընդգրկում է ոչ միայն հավիտենական կյանքը, որ խոստացված է Քրիստոսի արյունով փրկագնվածներին, այլև երկրի տիրապետությունը, որը կվերադարձվի փրկվածներին:

Հրեաները Քրիստոսի օրոք սպասում էին այդ թագավորության գալուն: Բայց նրանք չէին հասկանում մարգարեությունները և կարծում էին, թե Քրիստոսը վերականգնում է Իսրայելի երկրային թագավորությունը: Հիսուսը նրանց սպասումները չարդարացրեց: Այդ պատճառով նրանք Նրան դատապարտեցին տանջանքի և մահվան:

Հիսուսն ասում է. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ. եթե իմ թագավորությունն այս աշխարհից լիներ, ապա Իմ ծառաները կռիվ կանեին, որ չմատնվեի հրեաների ձեռքը, բայց հիմա Իմ թագավորությունն այս տեղից չէ» (Հովհաննես 18.36): Որտե՞ղ է այդ թագավորությունը:

Ամենից առաջ Աստծո թագավորությունը գտնվում է այնտեղ, որտեղ թագավորում է Աստված, որտեղ Նրա գահն է: Նայելով աստղային երկնքին, անընդգրկելի երկնակամարին՝ մենք մտորում ենք Աստծո մեծության մասին և հիշում ենք մարգարեի խոսքերը. «Այսպես է ասում Տերը. երկինքը իմ աթոռն է, և երկիրը՝ իմ ոտքերի պատվանդանը»:

Աստծո թագավորությունը ոչ միայն վերաբերում է որոշակի տեղի, որտեղ Աստված ունի իր գահը, այլև հոգու որոշակի վիճակի: «Որովհետև այսպես է ասում Բարձրը և Բարձրյալը, հավիտենականության մեջ բնակվողը, և որի անունը Սուրբ է: Ես բնակվում եմ բարձրում և սուրբ տեղը, բայց լինում եմ կոտրած և խոնարհ հոգի ունեցողի հետ, որ խոնարհների հոգին կենդանացնեմ, և կենդանացնեմ սրտով կոտրվածներին» (Եսայիա 57.15): Աստծո թագավորությունն իր մեջ ընդգրկում է այն ամենը տիեզերքում, ինչ Աստծո հետ միանգամայն ներդաշնակ է: Ամենուր, որտեղ կառավարում է Աստված, լույս է սփռվում, ուրախություն և խաղաղություն տիրում. դա Աստծո թագավորությունն է: Երբ մենք վեր ենք նայում, տեսնում ենք Աստծո

թագավորությունը, նրա տիեզերքը: Երբ նայում ենք երկրին, գիտենք, որ այն Աստծո երբեմնի թագավորության մի մասն է: Բայց այն ժամանակից ի վեր, երբ մեր նախահայրերը մեղանչեցին, և մարդիկ իրենց կյանքը հանձնեցին մարդկային սերնդի թշնամուն, այս աշխարհը պայքարի վայր դարձավ, Նրա թագավորության օրենքների և սիրո դեմ ապստամբության վայր:

Աստծո թագավորությունն առաջին հերթին պետք է հաստատվի մարդու սրտում և կյանքում: Նախքան մարդը կարող է վերցվել երկնային թագավորությունը՝ Աստծո մոտ, այդ թագավորությունը պետք է լինի նրա սրտում: Քրիստոսն ասաց. «Ահա Աստծո արքայությունը հենց ձեր ներսումն է» (Ղուկաս 17.21): Աստված կարող է և ցանկանում է հաստատել Իր թագավորությունը մեր սրտում: Բայց Նա սպասում է, որ մենք համագործակցենք Նրա հետ: Աստծո թագավորությունը նշանակում է Աստծո հետ լիակատար համաձայնություն:

Բայց մեզ դեռ պարզ չէ՝ որտեղ մենք պետք է անցկացնենք հավիտենությունը: Քրիստոսը խոսեց Իր Հոր տան մասին, որտեղ Նա ցանկանում էր մեզ համար տեղ պատրաստել. «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան. ապա թե ոչ ես ձեզ կասեի. գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ Ինձ մոտ կառնեմ. որ ուր ես եմ, դուք էլ լինեք» (Հովհաննես 14.2,3):

Որտե՞ղ են գտնվում Հոր այդ բնակարանները: Դրանք նոր աշխարհներ և մոլորակնե՞ր են արդյոք, որոնք Նա կպատրաստի մեր բնակության համար: Այս շարքի 5-րդ համարում մենք մանրամասն քննարկել ենք հազարամյա թագավորության հարցը, այն ժամանակի մասին, երբ փրկվածները Քրիստոսի հետ կթագավորեն երկնային քաղաքում, այն դեպքում, երբ սատանան կապված կլինի երկրի վրա հազար տարի: Բայց ի՞նչ կլինի հազար տարուց հետո: Փրկվածները որտե՞ղ կանցկացնեն անվերջ հավիտենությունը:

Մարգարեն Աստծո հանձնարարությամբ գրեց. «Որովհետև ահա Ես նոր երկինք և նոր երկիր եմ ստեղծում, և առաջինները պիտի չհիշվեն և միտքը պիտի չգան» (Եսայիա 65.17): Հայտնության 21. 1-4-ում մենք կարդում ենք. «Եվ տեսա նոր երկինք և նոր երկիր, որովհետև առաջի երկինքն ու երկիրը անցան, և էլ ծով չկա: Եվ Ես (Հովհաննես) տեսա սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը՝ վայր գալիս Աստծուց երկնքից՝ պատրաստված ինչպես մի զարդարված հարս իր մարդի համար: Եվ մի մեծ ձայն լսեցի երկնքից, որ ասում էր. ահա Աստծո խորանը մարդկանց հետ, և Նա կբնակվի նրանց հետ, և նրանք կլինեն նրան ժողովուրդ, և Ինքն Աստված նրանց հետ կլինի նրանց Աստված, և կջնջի Աստված բոլոր արտասուքը նրանց աչքերից, և մահն այլևս չի լինի, ոչ սուգ, և ոչ աղաղակ, և ոչ ցավ այլևս չի լինի, որովհետև առաջիններն անցան»:

Գրքի այս հատվածներից կարելի է հասկանալ, որ Աստված ի նկատի ունի երկրի նորոգումը, որի վրա մենք ապրում ենք, և նրան կդարձնի մարդկանց համար բնակության հրաշալի տեղ, Իր անընդ-

գրկելի Արքայության մի մասը: Սաղմոսերգուն երգում է. «Բայց խոնարհները երկիրը կժառանգեն և կուրախանան խաղաղության առատությունով» (Սաղմոս 37.11): Եսայիա մարգարեն նոր երկրի կյանքի մանրամասների մեջ է թափանցում և գրում է. «Եվ տներ պիտի շինեն և բնակվեն, և այգիներ տնկեն ու նրանց պտուղն ուտեն: Գայլը և գառը միասին կարածեն, և առյուծը արջառի պես խոտ կուտի» (Եսայիա 65.21,25): «Որովհետև ինչպես որ այն նոր երկինքը և այն նոր երկիրը, որ Ես ստեղծելու եմ, Իմ առաջին պիտի կանգնեն, ասում է Տերը, նույնպես էլ պիտի հաստատ կենա ձեր սերունդը և ձեր անունը: Եվ պիտի լինի, որ ամսից ամիս և շաբաթից շաբաթ պիտի գա ամեն մարմին Իմ առաջ երկրպագելու, ասում է Տերը» (Եսայիա 66.22,23):

Գրքում մենք կարդում ենք, որ երկու եղանակ կա Աստծո հավիտենական թագավորությունը մտնելու համար. առաջինը՝ մարմնի այլակերպման միջոցով, ինչպես Եղիան և Ենովքը, որոնց մասին ասված է, որ նրանք Աստծո մոտ վերցվեցին առանց մահանալու, և երկրորդը՝ մահացածների հարության միջոցով: Այդ երկու եղանակների մասին մենք կարդում ենք. «Որովհետև Ինքը՝ Տերը, հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա երկնքից. և Քրիստոսով մեռելներն առաջ հարություն կառնեն: Եվ հետո մենք, որ կենդանի ենք մնացած, նրանց հետ մեկտեղ ամպերով օդի մեջ կհափշտակվենք Տիրոջը դիմավորելու և այնպես ամեն ժամանակ Տիրոջ հետ կլինենք» (Ա Թեսաղոնիկեցիս 4.15, 16): «Ահա մի խորհուրդ եմ ասում ձեզ. ոչ թե ամենքս կննջենք, այլ ամենքս կփոխվենք: Հանկարծ մի ակնթարթում հետին փողի ժամանակին, որովհետև փողը կփչվի, և մեռելները հարություն կառնեն անապականելի, և մենք կփոխվենք: Վասնզի պետք է որ այս ապականացուն հագնի անապականությունը, և այս մահկանացուն հագնի անմահությունը» (Ա Կորնթացիս 15.51-53)

Այստեղ ճշգրտորեն նկարագրված է, թե ինչպես կարելի է հավիտյան լինել Քրիստոսի հետ Նրա արքայության մեջ. մարմնի այլակերպման միջոցով և մարմնի հարության միջոցով: «Բայց մեր քաղաքականությունը երկնքումն է, որ այնտեղից սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին, որ կնորոգի մեր խոնարհ մարմինը, որ Իր փառավոր մարմնին կերպարանակից լինի» (Փիլիպպեցիս 3.20,21): Ամեն անգամ, երբ Սուրբ Գիրքը խոսում է հարության մասին, նկատի ունի իրական անձնավորություն, և ոչ թե հոգի կամ ուրվական: Քրիստոսը հարություն տվեց Ղազարոսին, և Ղազարոսը գերեզմանից դուրս եկավ իրական մարմնով: Քրիստոսը աշակերտներին ցույց տվեց Իր ձեռքերն ու ոտքերը՝ մեխերից առաջացած հետքերով, և գեղարդից առաջացած վերքը: Նա նաև աշակերտների հետ հաց կերավ: Ղուկաս 24.39-42, Հովհաննես 20.27:

Քրիստոսի հավիտենական թագավորության մեջ կապրեն իրական մարդիկ՝ այլակերպված մարմիններով, որոնք ունակ են նոր երկրի պտուղներով և գեղեցկություններով բավականություն ստանալ:

Աստծո Խոսքում մենք գտնում

ենք որոշ մանրամասներ այն բնակիչների մասին, ովքեր պետք է բնակեցնեն Աստծո թագավորությունը՝ Նրա հրաշալի քաղաք Նոր Երուսաղեմով հանդերձ: Մենք կարդում ենք, որ այնտեղ ապրելու իրավունք կստանան միայն նրանք, ում անունները գրված են կյանքի գրքում: «Եվ բնավ չի մտնի նրա մեջ ոչ մի անմաքրություն անող և պղծություն և ստություն գործող, բայց միայն նրանք, որ Գառի կյանքի գրքի մեջ գրված են» (Հայտնություն 21.27):

Հետո այդ մարդկանց մասին է ասվում, որ նրանք Աստծուն հնազանդ են և պահում են Նրա պատվիրանները: «Երանելի են Նրա պատվիրանները պահողները, որ նրանցը կլինի իշխանությունը կյանքի ծառի վրա, և քաղաքի դռնով ներս կմտնեն» (Հայտնություն 22.14):

Հայտնի է նաև, որ Նոր Երուսաղեմի և նոր երկրի բնակիչներ կլինեն մարդիկ, որ Աբրահամի՝ բոլոր հավատացյալների հոր հավատի նման հավատ կունենան: Նրա մասին ասված է. «Որովհետև սպասում էր այն հիմունքով հաստատված քաղաքին, որի ճարտարապետը և Արարիչն Աստված է» (Եբրայեցիս 11.10): Բոլոր նրանց համար, որ նման հավատ ունեն, Աստված «քաղաք է պատրաստել» (16 համար): «Ապա եթե դուք Քրիստոսինն եք, ուրեմն Աբրահամի զավակ եք, և խոստմունքի համեմատ՝ ժառանգներ» (Գաղատացիս 3.29):

Նոր երկրի բնակիչների բնավորության մասին ասված է. «Երանի հեզերին, որ նրանք կժառանգեն երկիրը» (Մատթեոս 5.5):

Եվ որպեսզի ի վիճակի լինեն ապրելու սուրբ Աստծո ներկայության մեջ, Ով մեղավորների համար «փչացնող կրակ է» (Եբրայեցիս 12. 29), փրկվածները պետք է ստանան նոր մարմիններ: Բայց նախքան նոր մարմին ստանալը՝ նրանք պետք է ներսից փոխվեն, ունենան նոր սիրտ, նոր մտքեր և զգացմունքներ: «Ձեր ամեն մեկը թող այն մտածի, որ էլ Քրիստոս Հիսուսումն էր» (Փիլիպպեցիս 2.5): Մեզ խորհուրդ է տրվում. «Նորոգվեցե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք, թե ի՞նչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը» (Հռոմեացիս 12.2): Մենք պետք է ճանաչենք Աստծո կամքը, գիտենանք, թե ինչ է Աստված սպասում մեզանից և ինչպիսին է Նա մեզ ցանկանում տեսնել, երբ որ կգա, որպեսզի մեզ Իր մոտ վերցնի: Ինքը Տերը խոստանում է. «Եվ Ես ձեզ նոր սիրտ պիտի տամ, և նոր հոգի պիտի դնեմ ձեր միջում... և պիտի անեմ, որ Իմ օրենքները պահեք և նրանց կատարեք» (Եզեկիել 36.26,27):

Մեր սրտի նորոգումը, այսինքն՝ մեր զգացմունքների, հոգու, մտքի և մտածողության նորոգությունը պետք է կատարվի արդեն այս կյանքում: Աստծո Հոգին կատարում է այդ փոփոխությունը, երբ մենք Քրիստոսին հավատով ընդունում ենք մեր սրտում: Դա Աստծո թագավորության սկիզբն է, ինչպես Փրկիչն ասաց. «Ահա Աստծո արքայությունը հենց ձեր ներսում է»: Դա Աստծո շնորհի արքայությունն է: «Ուրեմն համարձակությունով մոտենանք շնորհքի աթոռին, որ ողորմություն ընդունենք և շնորհք գտնենք պատշաճ ժամանակին օգնելու» (Եբրայեցիս 4.16): Միայն Աստծո շնորհը կարող է մարդու

սիրտը դարձնել այն տեղը, որտեղ Քրիստոսն ապրում է Իր Հոգով:

Հետո՝ Քրիստոսի գալստյան ժամանակ, կգա Աստծո փառքի թագավորությունը: Նրանք, ում մտքերն ու զգացմունքները վերափոխվել են և Քրիստոսի կերպարն են արտացոլում, կստանան նոր, անմահ մարմիններ, որ ընդունակ են հավիտյան ապրելու Աստծո ներկայության մեջ, Նրա հավիտենական փառքի թագավորության մեջ:

Մարգարեները և առաքյալները փորձում էին տալ փառքի և գեղեցկության նկարագրությունը, որը սպասում է փրկվածներին: Բայց իրականությունը կգերազանցի բոլոր սպասումները: «Ինչ որ աչք չտեսավ, և ականջ չլսեց և մարդի սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար» (Ա Կորնթացիս 2.9):

Շատ աղքատ ընտանիքից մի փոքր տղա հաճախ կանգ էր առնում խանութի ցուցափեղկի մոտ և նայում էր խաղալիքներին: Երբեմն նա ցավացնելու աստիճան սեղմվում էր ապակուն, բայց միշտ ստիպված էր հեռանալ ձեռնունայն: Մի անգամ փողոցն անցնելիս այդ տղան ընկավ կառքի անիվի տակ և հիվանդանոց տարվեց: Երբ նա պառկած էր մաքուր սենյակում, սպիտակ մահճակալին, բուժքույրը նրա համար բերեց խաղալիք զինվորիկներ: Նա մեկնեց ձեռքը, սկզբում անվճռականորեն, հետո ավելի համարձակ: Վերջապես նա ձեռք տվեց խաղալիքին, հանգստացավ և հոգոց հանելով ասաց. «Ապակին չկա»: Այս անգամ նրա և խաղալիքի միջև չկար պատուհանի ապակին, որը նրան միշտ բաժանում էր խանութի ցուցափեղկի խաղալիքներից: Այնտեղ նա միայն կարող էր նայել այդ գանձերին հեռվից, իսկ այժմ դրանք իր ձեռքում էին:

Այդպես կլինի մի անգամ մեզ հետ, բարեկամնե՛ր: «Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ՝ դեմ առ դեմ» (Ա Կորնթացիս 13.12):

«Բայց Նրա խոստմունքի պես նոր երկնքի և նոր երկրի ենք սպասում, որոնցում արդարություն է բնակվում» (Բ Պետրոս 3.13): «Եվ Նա կուղարկի Իր հրեշտակները մեծաձայն փողով, և նրանք կժողովեն Նրա ընտրվածներին չորս կողմից՝ երկնքի ծայրերից մինչև նրա մյուս ծայրերը» (Մատթեոս 24.31): «Եվ թագավորությունն ու իշխանությունը և բոլոր երկնքի տակին եղող թագավորությունների մեծությունը պիտի տրվի Բարձրյալի սուրբերի ժողովրդին, Նրա թագավորությունը հավիտենական թագավորություն է» (Դանիել 7.27): Կլինե՞նք արդյոք մենք՝ ես և դուք, այդ փառքի թագավորության մեջ: